

1. Ըստ մեր սովորութեան նախ քան ձեռագրի ընդօրինակութիւնը թերթահամարներ դրինք սկզբից մինչև վերջը, ինչպէս ընդունուած է բանասիրութեան մէջ: Սակայն ձեռագիրն արդէն ունէր իջահամարներ՝ դրուած բուն իսկ գրչից: Դժբախտաբար այդ իջահամարները չափազանց անկանոն էին: Նախ՝ սկսուած են նախերգանքից յետոյ, այնպէս որ մինչև նախերգանքի վերջը չկայ ոչ մի իջահամար. երկրորդ՝ մէջ են տրուած որոշ թուեր, օր. 21, 32, 60—89. երրորդ՝ որոշ թուանշաններ, անյիշողութիւնից կրկնուել են, ինչպէս՝ 30, 46, 47, 48. վերջապէս 92-ից յետոյ իջահամար չկայ այլ ևս: Մենք պարտք համարեցինք, ձեռագրի մասին լրիւ գաղափար տալու համար, հրատարակութեանս մէջ, մէկ կողմից՝ լուսանցներում յիշատակել արդէն գոյութիւն ունեցող իջահամարներն իրանց բոլոր թերութիւններով, միւս կողմից՝ այնտեղից, ուր դադարում են իջահամարները, յիշատակել մեր դրած թերթահամարներով: Նախերգանքի թերթերն հարկ եղաւ նշանակել Ա, Բ, Գ տառերով:

Այսպիսով ընթերցողին հնարաւորութիւն է տրուում հետեւելու և տեսնելու, թէ հրատարակութեանս որ էջը իսկականի որ էջին է համապատասխանում: Կարևոր դէպքերում զանց չի առնուած յիշատակութիւն ծանօթութեանց մէջ:

2. Ձեռագրիս մէջ կան զանազան գրիչներ: Բուն Հաւաքարանի մասը, որ ստուարագոյնն է և նաւավար Ղազարի գրչին է պատկանում, մեծ մասամբ բոլորագիր և մասամբ էլ նօտրագիր է: Մնացած գրիչներին, որոնք բոլորն էլ նօտրագիր են, իրարից զանազանել ենք A, B, C ևս տառերով:

3. Պահել ենք պատիւի (-) կիրառութիւնը: Բացառութիւն են կազմում այսինքն, ըստ և աշխարհ բառերը, որոնցից առաջինները, ինչպէս յայտնի է, փակագրով էին ներկայացուած հին ժամանակ, իսկ վերջինը մի առանձին նշանով, որ բաւական նման է հայկական խօ (ⵇ) ձայնախաղին: Ձանց է արուած նոյնպէս թաւ նշանի գոր-